Դաս 44. Մշակութային գործիչ

Լրացուցիչ նյութ

Թումանյանի ճիշտ կանխատեսումը

Վիկտոր Համբարձումյան

Վիկտոր Համբարձումյանը հայ մեծանուն աստղաֆիզիկոս է, ով ճանաչված է ամբողջ աշխարհում: Ձեզ ենք ներկայացնում մի հետաքրքիր պատմություն նրա կյանքից: Մի անգամ, երբ Վիկտոր Համբարձումյանը դեռ փոքրիկ տղա էր, իր հայրիկի հետ այցելեց Թիֆլիս՝ Հովհաննես Թումանյանին հյուր: Այնտեղ նա Հովհաննես Թումանյանի բանաստեղծություններից մեկն արտասանեց: Հուզված Թումանյանը գրկեց գանգրահեր, խորունկ աչքերով տղային ու համբուրեց նրա ճակատը:

Անցան տարիներ: Վիկտոր Համբարձումյանը դարձավ հայտնի աստղագետ: Մի առիթով նա պատմեց իր մանկության այդ հուշը.

– Վաթսուն տարի է անցել այդ օրից, բայց ես դեռ ճակատիս զգում եմ Թումանյանի համբույրը: Այդ համբույրն այն ժամանակ ինձ ոգեշնչեց, որ ես ձգտեմ հասկանալու անհասկանալին, հասնեմ անհասանելիին: Ես սկսեցի շատ կարդալ, ամուր կապվեցի գրականությանը: Իսկ հետագայում համոզվեցի, որ տիեզերքի ճանապարհն անցնում է բանաստեղծության միջով:

Երբ Վիկտոր Համբարձումյանը 17 տարեկան էր, արդեն դասախոսություններ էր կարդում տիեզերքի, Արեգակնային համակարգի մասին, խոսում այնպիսի բաներից, որ այն ժամանակ մեծերն անգամ չգիտեին:

Պատմում են, որ այդ դասախոսություններից մեկին ներկա է եղել Հովհաննես Թումանյանը: Նա լսել է Համբարձումյանի խոսքն ու ասել.

– Էս մի մար տղան մեծ մարդ է դառնալու:

Թումանյանի կանխատեսումը ճիշտ էր: